ՉԻՆԱՍՏԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԻ ԱՄՓՈՓ ՏԵՂԵԿԱԳԻՐ

ՉԻՆԱՍՏԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Չինաստանի Ժողովրդական Հանրապետությունն ունի **ազատ առևտրի մասին համաձայնագրեր** հետևյալ երկրների հետ.

- **Պակիստան**
- **Իսլանդիա**
- **Շվեյցարիա**
- **Հարավային Կորեա**
- **Հարավ Արևելյան Երկրների Ասոցիացիա**/ASEAN/
- **Ավստրալիա**
- **Կոստա-Ռիկա**
- **Չիլի**
- **Նոր Զելանդիա**
- **Սինգապուր**
- **Պերու**
- **Վրաստան**
- **Մալդիվներ**

Չինաստանի Ժողովրդական Հանրապետության ազատ առևտրի համաձայնագրերին, ինչպես նաև բանակցային տարբեր փուլերում գտնվող համաձայնագրերին և արտոնյալ առևտրի համաձայնագրերին կարող եք ծանոթանալ այստեղ՝

http://fta.mofcom.gov.cn/english/fta_qianshu.shtml

[Չինաստանի Ժողովրդական Հանրապետության ազատ առևտրի համաձայնագրերի ցանց]

Եվրասիական տնտեսական միության անդամ երկրների և Չինաստանի Ժողովրդական Հանրապետության միջև առևտրատնտեսական համագործակցության մասին համաձայնագրի բանակցային փուլերն ավարտվել են և ներկայումս Համաձայնագրի կողմերն իրականացնում են ներպետական ընթացակարգերը:

Չինաստանի Ժողովրդական Հանրապետությունում գործում են հատուկ տնտեսական գոտիներ, բաց քաղաքներ և քաղաքի մեջ արտաքին առևտրի գոտիներ, որտեղ գործունեություն ծավալելով կարելի է նվազեցնել կամ որոշ դեպքերում չվճարել մաքսային և հարկային վճարներ: Վերոնշյալի վերաբերյալ տեղեկատվությանը առավել մանրամասն կարող եք ծանոթանալ այստեղ՝

https://www.healyconsultants.com/china-company-registration/free-zones/

[Չինաստանի Ժովորդական Հանրապետության ազատ առևտրի գոտիները]

Չինաստանի Ժողովրդական Հանրապետության Ցինտաո քաղաքում ՀՀ դեսպան Սերգեյ Մանասարյանի և Չինաստանի Ժողովրդական Հանրապետությունում ՀՀ

առևտրային կցորդ Հրանտ Աբաջյանի մասնակցությամբ տեղի է ունեցել Հայաստանի Հանրապետության համագործակցության գրասենյակի բացումը:

«Մեկ գոտի, մեկ ճանապարհ ինովացիոն համագործակցության կենտրոնի» կողմից ֆինանսավորվող գրասենյակի ներքո հայ գործարարները հնարավորություն կստանան հիմնելու իրենց ձեռնարկությունների ներկայացուցչությունները: Գրասենյակը զբաղվելու է չինական շուկայում հայկական ապրանքների և ծառայությունների ներկայացմամբ և իրացմամբ, զբոսաշրջության խթանմամբ և հայ-չինական գործարար կապերի ստեղծմամբ: Ցինտաո քաղաքի գրասենյակի գործառույթներն իրականացվելու են ՀՀ առևտրաարդյունաբերական պալատի և Արդյունաբերողների և գործարարների միության կողմից: Համագործակցության գրասենյակին անհատույց տրամադրված ընդհանուր տարածքը կազմում է 500 քմ, որն ապագայում, անհրաժեշտության դեպքում, կարող է ընդլայնվել:

Գրասենյակի բացումն ազդարարվել է ՀՀ առևտրաարդյունաբերական պալատի, Արդյունաբերողների և գործարարների միության, ինչպես նաև ՀՀ դեսպանության և «Մեկ գոտի մեկ ճանապարհ ինովացիոն համագործակցության կենտրոնի» (Belt & Road Collaborative Innovation Center) միջև համապատասխան պայմանագրերի ստորագրմամբ: Գրասենյակը զբաղվելու է հայկական արտադրության ապրանքների չինական շուկայում ներկայացմամբ և իրացմամբ, հայկական զբոսաշրջության խթանմամբ և հայ-չինական բիզնես կապերի ստեղծմամբ և ամրապնդմամբ:

Գրասենյակի հիմնական գործառույթներն են.

- Հայաստանյան ընկերությունների համար Չինաստանում ներկայացուցչություն հիմնելու հնարավորության ընձեռում՝ առանց Չինաստանում ընկերության հիմնելու
- Աջակցություն աշխատանքի արտոնագրի ստացման և այլ նմանատիպ հարցերում
- Ներկայացուցչությունների աշխատակիցներին բնակարանի անվճար տրամադրում
- Ներկայացուցչություններին գրասենյակային տարածքի և համակարգչային տեխնիկայի անվճար տրամադրում

- Ներկայացուցչությունների արտադրանքի ցուցադրման և/կամ ծառայությունների ներկայացման համար հարմարեցված տաղավարների տրամադրում
- Աջակցություն պոտենցիալ գնորդների հետ հանդիպումների կազմակերպման հարցում
- Խոշորագույն էլ. առևտրի պլատֆորմներում ներկայացված լինելու հնարվորության ընձեռում

Առավել մանրամասն տեղեկատվություն ստանալու համար կարող եք դիմել Չինաստանի Ժողովրդական Հանրապետությունում ՀՀ դեսպանություն Հայաստանի առևտրային ներկայացուցիչ Հրանտ Աբաջյանին՝ հետևյալ կոնտակտային տվյալներով՝

+861065325677; +8618811044611

կամ

armchinatrade@mineconomy.am

2011 **թվականից ՉԺՀ-ն հանդիսանում է ԱՀԿ անդամ:**

Չինաստանի ներմուծման մաքսատուրքերի գանձումը իրականացվում է՝

- **Ընդհանուր մաքսատուրքի դրույքաչափից**
- **Առավել բարենպաստ ազգերի ռեժիմի** /MFN/ **դրույքաչափից**
- **Համաձայնագրի դրույքաչափից**
- **Արտոնյալ դրույքաչափից**
- **Քվոտայի դրույքաչափից**
- **Ժամանակավոր դրույքաչափից**

Չինաստանի Ժողովրդական Հանրապետության ներմուծման մաքսատուրքերին կարող եք ծանոթանալ այստեղ՝

http://hs.e-to-china.com/

[Չինաստանի Ժողովրդական Հանրապետության մաքսային ծառայություն]

Չինաստանի Ժողովրդական Հանրապետություն ապրանքների ներմուծման ժամանակ գանձվող ավելացված արժեքի հարկի դրույքաչափը տատանվում է 13-17%-ի սահմաններում:

Չինաստանը կարող է կիրառել առավել բարենպաստ ազգերի ռեժիմին համաձայն սահմանված դրույքաչափից ցածր դրույքաչափեր այն ապրանքների համար, որոնք պետք է օգտագործվեն Չինաստանի Ժողովրդական Հանրապետության կառավարության կողմից գերակա ճանաչված ոլորտի զարգացման համար, օրինակ՝ Չինաստանի մաքսային վարչության կողմից որոշակի ժամանակահատվածում արտոնյալ մաքսատուրքերի դրույքաչափեր են կիրառվել մեքենաշինության, դեղագործության ոլորտներում օգտագործվող ապրանքների ներմուծման ժամանակ:

Չինաստանի Ժողովրդական Հանրապետությունից արտահանման, ինչպես նաև մաքսային ձևակերպումների մասին ընդհանուր տեղեկությանը կարող եք ծանոթանալ այստեղ՝

https://gain.fas.usda.gov/Recent%20GAIN%20Publications/Exporter%20Guide_Beijing%20ATO_China%20-%20Peoples%20Republic%20of_12-30-2016.pdf

[ՉԺՀ արտահանողի ուղեցույց]

https://keitercpa.com/wp-content/uploads/2015/07/Importing-and-Exporting-in-China.pdf

[Չինաստան ներմուծումը և արտահանումը. Ուղեցույց օտարերկրյա առևտրային կազմակերպությունների համար]

ՉԺՀ ներմուծման արգելված ապրանքներին կարող եք ծանոթանալ այստեղ՝

http://english.customs.gov.cn/Statics/a5e61d7c-4818-44c0-96a1-911e060da95c.html

ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՉԻՆԱՍՏԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀՆԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԱՌԵՎՏՐԱՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայաստանի Հանրապետության առևտրաշրջանառությունը Չինաստանի հետ 2016 թվականին կազմել է 454,0 մլն. ԱՄՆ դոլար, ինչը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազել է 5,7%-ով (2015 թվականին կազմել է 481,0 մլն. ԱՄՆ դոլար): 2016 թվականին արտահանումը Հայաստանի

Հանրապետությունից Չինաստան կազմել է 96,4 մլն ԱՄՆ դոլար, ինչը նախորդ տարի նույն ժամանակահատվածի համեմատ նվազել է 41,7%-ով (2015 թվականին կազմել է 165,3 մլն. ԱՄՆ դոլար): 2016 թվականին Չինաստանից Հայաստանի Հանրապետություն ներմուծումը, ըստ ծագման երկրի հատկանիշի, կազմել է 357,7 մլն.ԱՄՆ դոլար, ինչը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 13,2%-ով (2015 թվականին կազմել է 316,1 մլն. ԱՄՆ դոլար), ըստ առևտուր անող երկրի հատկանիշի ներմուծումը կազմել է 166,0 մլն. ԱՄՆ դոլար, ինչը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 6,8%-ով (2015 թվականին կազմել է 155,4 մլն. ԱՄՆ դոլար):

2016 թվականին Հայաստանի Հանրապետությունից Չինաստան արտահանված առավելագույն մաքսային արժեք ունեցող ապրանքներն են՝

- **պղնձի հանքաքար և խտահանք**,
- **թանկարժեք մետաղի հանքաքար ու խտահանք**,
- **թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր**,
- **ալկոհոլային խմիչքներ**,
- **հանքային ջրեր:**

2016 թվականին Չինաստանից Հայաստանի Հանրապետություն հիմնականում ներմուծվել են հետևյալ ապրանքատեսակները՝

- **հեռախոսներ**,
- **համակարգիչներ**, **մոնիտորներ և պրոյեկտորներ**,
- **կոշկեղեն**,
- **հագուստ**,
- **երկաթից հարթ գլանվածք:**

ԱՅԼ ՕԳՏԱԿԱՐ ՀՂՈՒՄՆԵՐ

http://english.customs.gov.cn/Statics/644dcaee-ca91-483a-86f4-bdc23695e3c3.html

[ՉԺՀ մաքսային օրենքը]

http://english.mofcom.gov.cn/article/policyrelease/Businessregulations/2013030004 5871.shtml

[ՉԺՀ արտաքին առևտրի մասին օրենք]

http://english.customs.gov.cn/Statics/644dcaee-ca91-483a-86f4-bdc23695e3c3.html

[ՉԺՀ ներմուծման և արտահանման կարգավորումները]